ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2020-2022ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտեր) ուսումնասիրության և ս.թ. հունիսի 12-ին ՀՀ Բարձրագույն դատական խորհրդում (այսուհետ՝ ԲԴԽ) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում ներկայացնում ենք Հայտերի վերաբերյալ հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում.

1. Հայտերում բացակայում է տեքստային-նկարագրողական հատվածը՝ «Զարգացման միտումները նախորդ միջնաժամկետ հատվածում», «Նպատակները և թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում» և «ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային գերակայությունները» բաժիններում:

<u>Առաջարկություն 1.1</u>

- Ներկայացնել իրականացվող ծախսային ծրագրերը, ինչպես նաև հիմնական ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկան վերջին երեք տարիների համար, (օրինակ՝ աճի տեմպերը և դրանց բացատրությունները):
- Հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև այն հանգամանքը, որ պետական կառավարման համակարգի մարմինների **բյուջետային ֆինանսավորման ոլորտում պետք է գերակայեն ոչ միայն ԲԴԽ-ի և դատարանների (որպես առանձին իշխանության թևի) կողմից ներկայացվող ռազմավարական ուղղությունները, այլև դրանք պետք է համահունչ լինեն ՀՀ կառավարության կողմից հաստատված երակարաժամկետ թիրախներին ու նպատակներին՝** անհրաժեշտ է ՄԺԾԾ ժամանակահատվածում ԲԴԽ-ի և դատարանների բյուջետային հայտերի ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս հաշվի առնել նաև հետևյալ ռազմավարական փաստաթղթերը՝
  1) Ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիրը: **Օրինակ՝** ՀՀ կառավարության գործունեության հիմնական ուղենիշներից է **անկախ դատական համակարգի գոյությունը** և դրա իրականացման համար 4.1-րդ «ՕՐԵՆՔԻ ԱՌՋԵՎ ԲՈԼՈՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» բաժնով նախատեսվել են երեք հիմնական քայլեր՝ դատական համակարգի վստահելիության մակարդակի բարձրացում, դատավորների գործունեության ապօրինի միջամտելու գործելակերպի բացառում, դատավորների մասնագիտական ունակությունների բարձրացմանն ուղղված ջանքերի գործադրում:
  2) Վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ, որի հավելվածով հաստատված ՀՀ և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու

դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի «Արդարադատություն, ազատություն և անվտանգություն» վերտառությամբ Մաս 3-ով: **Օրինակ՝** 5-րդ միջոցառմամբ նախատեսված է Դատական և իրավական բարեփոխումների 2019-2024թ. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի ընդունում, կամ 7-րդ միջոցառմամբ նախատեսված է ՀՀ-ում դատավորների թվաքանակի աճ և այլն:

- Ներկայացնել ՄԺԾԾ ժամանակահատվածում ռազմավարական նպատակների և թիրախների ապահովման նպատակով ԲԴԽ-ի և դատարանների կողմից իրականցվող հիմնական ծախսային ուղղություններն ու գերակայությունները և դրանցից առանձնացնել առավել գերակա ուղղությունները, ներկայացնել դրանց նկարագրողական բաժինները՝ համապատասխան հիմնավորումներով:

Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ.

2. Հայտերում ներառված նոր նախաձեռնությունները չեն համապատասխանում Մեթոդական ցուցումների պահանջներին: **Օրինակ 1.** Հայտերում ՄԱՍ 3-ի հավելված 2-ում ներկայացված ձևաչափին համապատասխան՝ որպես նոր նախաձեռնություն է ներկայացվել **31004 դասիչով միջոցառում «Էլեկտրոնային արդարադատության համակարգի ծրագրի ներդրում»** անվանմամբ, սակայն Մեթոդական ցուցումների 4.3 բաժնի պահանջներին համապատասխան չեն ներկայացվել Մաս 3-ի 3-րդ, 4-րդ, 5-րդ հավելվածները (մեկ աղյուսակի տեսքով): Բացի այդ՝ նշված նախաձեռնությանը տրվել է դասիչ, սակայն պարզ չէ, թե այդ միջոցառման համար պետական բյուջեից համապատասխան ֆինանսավորում տրվելու է, թե՞ ոչ: **Օրինակ 2.** ՄԱՍ 3-ի հավելված 2-ում 31004 դասիչով միջոցառման արդյունքային ցուցանիշ է սահմանված 2021 և 2022 թվականների համար համապատասխանաբար 30 և 50 տոկոսով ժամկետի կրճատում: Այդ առնչությամբ պարզ չէ, թե էլեկտրոնային արդարադատության ծրագրի ներդրման պարագայում նշված տոկոսներով ժամկետների կրճատումն **ինչ ազդեցություն է ունենալու մյուս միջոցառումների համար մշակված քանակական և որակական արդյունքային ցուցանիշների վրա՝ հաշվի առնելով, որ 31004 միջոցառման նպատակը** դատավորների տեխնիկական աշխատանքի վրա ծախսվող ժամանակի, փաստաթղթաշրջանառության և ծախսատարության կրճատումն է, ինչը հանգեցնելու է թե պետական և թե դատարանի այլ օգտատերերի միջոցների խնայողության, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության ու նրանց գործունեության գնահատման, գործերի բաշխման և վերաբաշխման ավտոմատացված համակարգի ներդրման, արդյունավետ և մատչելի արդարադատության, հանրային հաշվետվողականության և թափանցիկության ապահովման: **Օրինակ 3.** Նոր նախաձեռնություն են համարվում նաև 1080 ծրագրի շրջանակներում իրականացվելիք 31002 դասիչով՝ Բարձրագույն դատական խորհրդի տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում, և 31003 դասիչով՝ Դատարանների շենքերի վերակառուցում, նոր շենքերի կառուցում և նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում միջոցառումները, սակայն դրանք չեն ներկայացվել որպես նոր նախաձեռնություն:

<u>Առաջարկություն 2.1</u>

- Հայտերում ներառված նոր նախաձեռնությունները ներկայացնել Մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխան՝ ներկայացնելով մանրամասն հիմնավորումները ըստ ձևաչափերի, ինչպես նաև այդ նախաձեռնությունների արդյունքային ցուցանիշները համադրել 1080 ծրագրի այլ միջոցառումների արդյունքային ցուցանիշների հետ: